

ուխտաւորութեան համար . ժամանակ մը Փառանի վանքին անապատականներուն քով մնալէ վերջ հաստատուեցաւ Սահէլ . հոն վանք չչինեց . կը գոհանար պարզ աղօթարանով մը : Քիչ ժամանակի մէջ տարածուեցաւ իր համբաւը մինչև Արարիոյ խորերը , շատ աշակերտներ ունեցաւ՝ որոնց համար ստիպուեցաւ խրճիթներ շինել և ունենալ եկեղեցի մը : Եւթիմիոս մեծ գործունէութեամբը ունեցաւ արդիւնաւոր կեանք մը՝ ճշմարիտ առաքեալ մը հանդիսանալով քրիստոնէական կրօնի . ալևոր տարիքին մէջ վախճանելով իր նշխարները ամփոփուեցան իր վանքին մէջ : Եւթիմիոսի մահէն եօթը տարի վերջ , 480 ին , վանքին սարկաւազներէն Փիտոս՝ վերաշինեց վանքը ընդարձակ և հոյակապ շէնքերով , աշակցութեամբ Երուսաղէմի պատրիարքին : Սահէլ՝ որ այժմ կը կոչուի Սահ կոնաք , Երուսաղէմէն 12 մղոն հեռու կը գտնուէր , Ս . Քաղաքէն դէպի Երիքով տանող արդի ճանապարհին հարաւը և Նէպի Մուսայի ուխտաւորական ճանապարհին մօտ :

Քանի մը տարիէ ի վեր պեղումներով կը հետազօտուին Եւթիմիոսի վանքին վիթխարի աւերակները , որոնցմէ երեան ելած են վանքին եկեղեցին և ուրիշ տեղեր , ինչպէս նաև Եւթիմիոսի և իր վանականներուն մեռելամատուոքը : (Եւթիմիոս վանքին պատմութիւնը և նկարագրութիւնը , ինչպէս նաև նշանաւոր մէկ քանի հայ Մեղիտինացի անձերու նոյն վանքին մէջ աշակերտութեան և գործունէութեան մասին տեսնել Հ . Վ . Ե . էջ 329-339) :

Այս պատմական ակնարկէն յետոյ , յիշենք նոյն վանքին մէկ քանի աւանդութիւնները .

ա) Հացին հրաշքը . — Հաւանաբար Ե . գարու կի-